

### ՖԻԶԻՈԹԵՐԱՊԻԱ. ԽԱՂԵՐ ԵՎ ՇԱՐԺԱԽԱՂԵՐ


Ֆիզիոթերապիան նպաստում է մտավոր և ֆիզիկական սահմանափակումներ ունեցող երեխաների առողջության և մտավոր զարգացմանը, տարածական կողմնորոշմանը, մանր և խոշոր շարժունակության բարելավմանն ու զարգացմանը, որոնք իրականացվում են խաղերի և շարժախաղերի միջոցով:

#### ԽԱՂ՝ «ՑԱՏԿ ՕՂԱԿԻՑ ՕՂԱԿ ԿԱՄ ՔԱՅԼ ԱՆՑՈՒՄՈՎ, ՓՈՔՐ ԳՆԴԱԿԻ ՆԵՏՈՒՄ ՆՊԱՏԱԿԻՆ»

**Նպատակ:** Բարելավել և զարգացնել ցատկունակությունը, տարածական կողմնորոշումը, դիպուկությունը, մանր և խոշոր շարժունակությունը:

**Անհրաժեշտ նյութեր:** Մարզական 4 օղակ, 1 փոքր գնդակ

**Ընթացք:** Օղակները դրվում են հատակին՝ 30 սմ հեռավորության վրա, ելման դիրքից երեխան ցատկում է օղակից օղակ՝ հաջորդաբար հասնելով հատակին դրված փոքր գնդակին, վերցնելով գնդակը՝ նետում է նպատակին, գնդակը դնում նետման տեղում և վերադառնում ելման դիրքը:






ԽԱՂ՝ «ՔԱՅԼ ՊԱՐԱՆԻ ՎՐԱՅՈՎ՝ ԶԵՌՔԵՐԸ ԳՈՏԿԱՏԵՂԻՆ,  
ԳՆԴԱԿՆԵՐԻ ՆԵՏՈՒՄ ԴՈՒՅԼԻ ՄԵՋ»

**Նպատակ:** Վերականգնել և զարգացնել հավասարակշռությունը, կեցվածքը, տարածական ընկալումը, մանր և խոշոր շարժունակությունը, ստորին վերջույթների կոորդինացված շարժումները:

**Անհրաժեշտ նյութեր:** 1 պարան՝ 3 մ, 4 փոքր գնդակ, 1 դույլ, մարզական 1 փոքր օղակ:

**Ընթացք:** Երեխան քայլում է հատակին դրված պարանի վրայով՝ ձեռքերը գոտկատեղին՝ հասնելով հատակին դրված օղակին, որի մեջ դրված 4 փոքր գնդակները վերցնելով՝ նետում է դույլի մեջ, այնուհետև նետած գնդակները դույլից հանելով՝ դնում է օղակի մեջ և վերադառնում ելման դիրք:






ԽԱՂ՝ «ՄԵԾ ԳՆԴԱԿԻ ԶԱՐԿԱԾՈՒՄ ՕՂԱԿԻ ՄԵՋ ԵՎ ԲՈՒՆՈՒՄ, ԱՆՑՈՒՄ ՄՅՈՒՄ ՕՂԱԿՆԵՐԻՆ, ԶԵՏՈ ՆԵՏՈՒՄ ՊԱՏԻՆ, ԳՆԴԱԿԻ ԲՈՒՆՈՒՄ ԵՎ ՎԵՐԱԴԱՐՁ ԵԼՄԱՆ ԴԻՐՔ»

**Նպատակ:** Բարելավել և զարգացնել մանր և խոշոր շարժունակությունը, կողմնորոշումը, դիպուկությունը, արագաշարժությունը:

**Անհրաժեշտ նյութեր:** Մարզական 4 օղակ, 1 մեծ գնդակ

**Ընթացք:** Երեխան՝ վերցնելով մեծ գնդակը և հարվածելով օղակի մեջ, բռնում է երկու ձեռքով, կատարում է անցում հաջորդ օղակներին, հասնելով վերջին օղակին՝ նետում է պատին, հետո բռնելով գնդակը երկու ձեռքով՝ վերադառնում ելման դիրք:




## ԽԱՂ՝ «ՔԱՅԼ ՈՒՂԻՂ ԳԾՈՎ»

**Նպատակ:** Բարելավել և շտկել կեցվածքը, տարածական կողմնորոշումը, զարգացնել խոշոր շարժունակությունը:

**Անհրաժեշտ նյութեր:** Ավազով լցված 50-60 գրամ քաշով մեկ տոպրակ:

**Ընթացք:** Երեխան ավազով լցված տոպրակը դնում է գլխին, ձեռքերը՝ գոտկատեղին: Ելման դիրքից ուղիղ գծով քայլելով 9-10 քայլ, առաջ նայելով հասնում է վերջնագծին: Այնուհետև 2 ձեռքով գլխի վրայից վերցնում է տոպրակը, փոխանցում խաղավարին և վերադառնում ելման դիրք:



ԽԱՂ՝ «ԱՉԱՏ ՔԱՅԼԲ ԿԱՂԻՆՈՎ ԼՅՎԱԾ ՏՈՊՐԱԿՆԵՐԻ ԿՐԱՅՈՎ»

**Նպատակ:** Նպաստել հարթաթության կանխմանը և մասամբ՝ վերացմանը, բարելավել և զարգացնել հավասարակշռության պահպանումը, տարածական ընկալումը, մանր և խոշոր շարժունակությունը:

**Անհրաժեշտ նյութեր:** Կաղինով լցված 25x10սմ 7-8 տոպրակ, 1 մեծ գնդակ, 1 փոքր օղակ

**Ընթացք:** Կաղինով լցված տոպրակները դրվում են հատակին՝ միմյանցից 30-35սմ հեռավորության վրա: Ելման դիրքից երեխան ազատ քայլելով տոպրակների վրայով հասնում է հատակին դրված գնդակին և այն գլորելով վերադառնում ելման դիրք՝ շարժվելով հատակին դրված տոպրակների արանքով:

